ժամ ստանում (Ցաւել. Ա. 91). Միթորը 100 դահեկան տալիս եւ հինգ ժամ ստանում (Ցաւել. Ա. 92). տէր Ցուսէփը 1000 սպիտակ տալիս եւ հինգ ժամ ստանում (Ցաւել. Ա. 93, պատկ. 141). Թորոս 40 դահեկան տալիս եւ երկու օր ստանում (Ցաւել. Ա. 91). Տիրատուր 44 դահեկան տալիս է «ի գաւիթս» եւ երկու ժամ ստանում (Ցաւել. Ա. 95). այս վերջին արձանագրութիւնը 1225 թուականից յետոյ պէտք է դնել, երբ մօտաւորապէս չինուեցաւ գաւիթը. այս մասին յետոյ։ «Խորինչահ ամուսին Զաքարեի տն. Թեդան» միաբանում է եւ տալիս երկու սկիհ, մի բուրվառ, արծաթի կանթեղ եւ ուրիշ արդիւնք եւ ստանում տարին չորս ժամ, երկուսն իրեն և երկուսը Զաքարէին (Ցաւել. Ա. 96)։ Թեոդան կամ Թոդան անունով մի վայր գտնւում է Արցախում (*). արդեօ՞ք նուիրատու ամուսինները այս վայրի տէրերն էին։ Ոմն Շողակաթ տալիս է 20 դահեկան և ստանում մի ժամ (Ցաւել. Ա. 97), իսկ Խաչիկ «սնեալ ի սբ. Աճաձինս» 40 դահեկան։ Խաչատուր ոմն տալիս է իւր այգին «ի սբ. եղբայրանոցս» եւ ստանում տարին երկու օր ժամ, մէկն իրեն, միւսը ծնողներին. Ստեփանոս 40 դահեկան է տալիս և երկու ժամ ստանում, մէկն իրեն, միւսը Պետրոս եղբօրը. Համազասպը տալիս է 40 դահեկան եւ երկու օր ստանում. Բախտոս դարբնին՝ միաբանները որոշում են երկու օր ժամ տալ (Ցաւել. Ա. 98, պատկ. 139)։ Վարդաշահ յիսուն դա-



Պատկեր 141.

(*) Ջալ. Ա. 210։ Բարխուդարեան, Արցախ, 252։